

անհամաձայնություն, նախանձախնդիր քրիստոնեան չի վախենում առիթը ներկայացած ժամանակ (օգտագործելով Գոյապաշտների կողմից ժողովրդականացրած մի արտայայտություն). «Կեղտոտել իր ձեռքերը»: Նա պետք է միջամուխ լինի իրերի էական հարցերի եւ փորձի ապդեցություն բանեցնել: Սակայն աշխարհի անորոշության մեջ կեղտոտուած ձեռքերը պետք է շարունակ լուացուն կրկնող պոշումով: Աշխարհի Ազգեան ախոռի ճիշտ մեջտեղում քրիստոնեան պետք է լաւատեսութեամբ լծուի եռանդոտ կրօնական աշխատանքին եւ բարոյական մաքրութեան համար, իբր սիրոյ Աստծու դեսպան՝ ի մոի ունենալով Խաչի միջոցով կառարուելիք յաղթական փրկութեան խոստումը: Աշխարհիկ պաշտօնեաներից չի ակնկալում հետեւողականօրէն կառարել իրենց պարտականութիւնները՝ ըստ այդ հրամանակարգի: Բայց դա եկեղեցու պետի պատասխանատւութիւնն է հետեւել, որ պետութիւնների առաջնորդը յանկարծ չշեղուի բարոյական պարկեշտութիւնից: Չորրորդ դարի Հայոց Յուսիկ կաթողիկոսը, իր կեանքը փռեց այն բանի համար, որ նա համարձակուեց յիշեցնել թագաւորին, որ վերջինս պետք է բարեկարգի իր ընթացքը եւ երկիրը կառավարի այնպէս, ինչպէս վայել է քրիստոնեայ թագաւորին:

ԴԷՊԻ ԲՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ԲԱՆԱԼԻՆ

Ի վերջոյ, դէպի քրիստոնէական քաղաքականութիւն առաջնորդող բանալին թաքնուած է համատեա Աւետարանների կողմից պատմուած հետեւեալ դրուագում: Այս դրուագի սովորեցրած դասի արձագանքները շարունակաբար լսում են նաեւ Յովհաննէսի Աւետարանի մէջ: Այսպէս է հաղորդում Սուրբ Մատթէոսը.

Մինչ Յիսուս դեռ խօսքն ուղղում էր բապտիստանը, ահա նրա մայրն ու եղբայրները դրսում կանգնած են եւ ուրում էին խօսել նրա հետ: Եւ մէկն ասաց նրան. «Ահա քո մայրն եւ քո եղբայրները դրսում կանգնած են եւ ուրում են քեզ հետ խօսել»: Նա այդ ասողին պատասխանեց եւ ասաց. «Ո՞վ է իմ մայրը կամ ովքե՞ր են իմ եղբայրները»: Եւ իր ձեռքը երկարելով դէպի իր աշակերտները՝ ասաց. «Ահա իմ մայրը եւ իմ եղբայրները, որովհետեւ, ով կառարում է իմ հօր կամքը, որ երկնքում է, նա՛ է ինձ եղբայր եւ քոյր եւ մայր»:

Սուրբ Ղուկասի Աւետարանում մենք ունենք ուրիշ մի միջադէպի նկարագրութիւն եւս, որը թէ՛ արձագանքում եւ թէ՛ յատկեցնում է վերը բերուած հատուածը.

Եւ նա եկաւ, որ անցնէր բապտիստան միջով, մի քանի կանայք բապտիստան միջից իրենց ձայնը բարձրացրին եւ ասեցին նրան. «Օրինեալ է քեզ ծնող արգանդը եւ քեզ սնող կործբը»: Բայց նա ասաց. «Աւելի օրինեալ են նրանք, ովքեր լսում են Աստծու խօսքը եւ կառարում դրանք»:

Այսպիսի հատուածներում երեւում է Յիսուսի մշակած Յեղափոխութիւնը, որի համար էլ նա իր կեանքը տուեց: Այս յեղափոխութիւնն էր, որ իր ժամանակակիցները չհանդուրժեցին եւ ամէն ինչ արեցին նրան մահուան դատապարտելու համար: Այն ինչ Յիսուս պատուիրում է, կարելի է համարել արտասովոր դժուարութեան մի մխրագործութիւն եւ դա հետեւեալն է. մարդկային յարաբերութիւնները պետք չէ հիմնուած լինեն սերնդական կամ ազգային մերձաւորութեան

վրայ: Դրանք պետք է հիմնուած լինեն մեր հասարակաց մարդկայնութեան կամ, եթէ նոյն մտածումը տարբեր կերպ ասենք՝ մի Աստծու Հայրութեան վրայ: Սա պետք չէ շփոթել դեռ անկատար վիճակ ունեցող համաշխարհայնացման հետ: Սա ատելի շրջաններին բնորոշ իրողութիւն է: Դու քո երկրամասի ժողովրդի համար «եղբայր» կամ «քոյր» եւ ոչ այն պատճառով, որ դու եւ նրանք էական իմաստով տարբեր էք աշխարհի միւս մարդկանցից, այլ պարզապէս այնպէս է պատահել, որ նրանք քո հարեւաններն են եւ դուք միասին ունէք ընդհանուր հիմնախնդիրներ, որոնք լուծման են կարօտում եւ որոնք օգտակար են բոլորի համար: Այդ իսկ պատճառով, վաղ շրջանի եկեղեցիները յայտնի են իրենց աշխարհագրական տեղանուններով: Կայ Հռոմի եկեղեցին, Յունաստանի եկեղեցին, Ռուսաստանի եկեղեցին, Հայաստանի եկեղեցին - նրանք ովքեր ունեն պահանջուած հոգեւոր աչքերը, կը տեսնեն, որ այդ եկեղեցիները նոյնն են: Օրինակ՝ «Հայաստանի եկեղեցի» արտայայտութիւնը, եթէ ճիշտ խօսենք, երբեք մի պարզ անուն չի եղել եւ չէ, դա տարածքային անուանում է, այն տարածքի ակնարկումն է, որտեղ գտնուում եւ գործում է Բրիտոսի մէկ եկեղեցու մի մասը:

Եթէ քրիստոնէական տեսանկիւնից դիտենք, ապա մարդկային յարաբերութիւնները պետք է միայն հիմնուած լինեն հոգեւոր մերձաւորութեան վրայ: Բո «եղբայր»ն ու «քոյր»ը միայն նրանք չեն, ովքեր ունեն նոյն ծնողները, ինչ որ դու: Իւրաքանչիւր անհատ պարագաների բերումով կարող է քո եղբայրն ու քոյրը լինել: Բո հարեւանը, քեզ հետ միասին իրեն կը ճանաչի իբրեւ Սուրբ Երրորդութեան երեխայ եւ գործակալ: Ապաշխարած քրիստոնէաները հիմնականում ապրում են այս համոզումով. այսինքն համոզումը այն է, որ իմ հարեւանը իմ եղբայրը կամ քոյրն է: Սա այն համոզումն է, որի հիման վրայ կառուցուել են կուսանոցներն ու վանքերը: Դրանք այնպիսի հաստատութիւններ են, որտեղ մարդիկ թէւ «անձամօթ» են միմեանց, այդուհանդերձ նրանք իրար համարում են քոյրեր եւ եղբայրներ (եւ որեւէ ուրիշ մէկին) եւ միասին հնապանդում են աբբաօրը կամ աբբամօրը, որն էլ իր կարգին, հնապանդում է եկեղեցու այն Էշխանութիւններին, որոնք ներկայացնում են եկեղեցին իբրեւ մի ամբողջութիւն: Այս համոզումի վրայ է հիմնուած յաճախ լսուած Բուէլկրեթի ասացածքը, թէ անձամօթը մի բարեկամ է, որին առաջին անգամն եւ հանդիպում:

Բո հարեւանը քո եղբայրն է վարդապետութիւնից մի կարեւոր հետեւութիւն է բխում, որն է. եթէ քո հարեւանը քո եղբայրն է, ուստի աշխարհում ամէն մէկը քո եղբայրն է, քանի որ աշխարհում իւրաքանչիւր ոք, այս կամ այն պատճառով, մի օր կարող է դառնալ քո նոր հարեւանը: Սա ճիշտ չէ նոյն ծնողներից սերածների համար: Եթէ դու եւ Արամ ունէք նոյն ծնողները, ապա միայն նա, եւ ուրիշ ոչ մէկը, կը մնայ եւ կը լինի քո եղբայր Արամ: Նոյն բանը ճիշտ է քո ապգին պատկանող անհատի եղբայր Արամ: Նոյն բանը ճիշտ է քո ապգին պատկանող անհատի պարագային: Եթէ դու սիրում եւ Զարի Էքսեանին քո հայրենակից լինելու պարագային: Եթէ դու սիրում եւ հաւանական հարեւան լինելու պատճառով, համար եւ ոչ թէ քո իսկական եւ հաւանական հարեւան լինելու պատճառով էլ ապա քո սէրը ունի բացարձակ այլամերժութիւն, այդ պատճառով էլ ապգայնամոլութիւնը եւ իսկական քրիստոնէութիւնը իրար անհաշտ են:

Անշուշտ, այս դիտողութիւններից պետք չէ ելլակացնել, թէ հարեւանի սէրը անհամատեղելի է հարապատի հանդէպ ունեցած իւրապատուկ սիրոյ հետ (կամ ամուսնու կամ ազգականների եւ կամ նոյն ապգի պատկանող անհատների): Երբեք: Բո եղբայրներն ու քոյրերը քո

ամենամօտիկ ազգականներն են, երբեմն մշտական «հարեամները»։ Իրականում, առանց հարեամի համդեպ մեծ սէր ունենալու, այնպես ինչպես Յիսուս նկատի ուներ, ամուսինների, եղբայրների եւ քույրերի, ազգականների եւ հայրենակիցների միջեւ նախասկզբնական սէրը շուտով կը վերածուի տարածաշրջանների եւ նոյնիսկ առէլի վառ։ Միջապգային յարաբերություններն են նկատի առնելով՝ հետեւեալ հետեւութիւնը կարելի է անել. ոչ մի հարեամն պէտք չէ օգտագործուի կամ փոխաբերուի՝ ելնելով ազգակցական յարաբերությունների շահերի դիրքերից։ Սա է այն սկզբունքը, որի պայմանների համաձայն առաջացած հսկայական ոճրագործությունները, ինչպիսին են անաբեկչությունը, անարդար պատերազմը եւ ցեղասպանությունը, մենք դատապարտում ենք իրաւացի պայտյթով։

ՈՐՔԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ

Հարցը պէտք է առէլ հետապնդել. երբեւէ կը լինի՝ այնպիսի հասարակութիւն, որի անդամները անտեսեն սելնդական մերձատրութիւնը՝ ի նպաստ հոգեւոր կապերի կամ բացառապէս տիեպերական, եւ ոչ իշխանական շահերի օգտին։ Յիսուս Բրիտոսի հայրենակիցների մէջ իշխող տպւորների համար, այսպիսի հասարակութեան հարց չկար, քանի որ դա, նախ եւ առաջ ցանկալի չէր։ Այդ տեսակ հասարակութեան պաշպանողութիւնը պարպապէս մի սպառնալիք էր իրենց կրօնական նախասիրութիւններին եւ հաւաքական գոյատեւմանը։ Յիսուս խաչուեց եւ պատրաստ է մէկ անգամ եւս գամուելու Խաչին, որպէսպի ցոյց տալ, թէ փոխադարձ ընկերակցութիւնը, որը հիմնուած է այն ճանաչման վրայ, թէ անհատը եւ ուրիշները նոյն Հօր պաւակներն են, որը երկկրում է, (անջատո նոյն Իշխանի հպատակներից) եւ սրա հետեւանքով բարոյական վերաբերմունքը միակ պայմանն է, յառկապէս մարդկային ներուժի իրագործման համար։

Ուժը, որին մենք կոչում ենք Սատանայ, բնութագրուել է իբրեւ աշխարհի Իշխանը, այսինքն՝ ժամանակի եւ տարածութեան Իշխանը։ Վերջին դարի գլխաւոր մի ստուածաբան Կառլ Բարթը, նկատել է, որ Հին Ուխտում Աստծու ժողովուրդը սպառնալիքի տակ էր կամ նրանք միշտ վայրագ յարձակումների են ենթակուել այնպիսի ապգերի կողմից, որոնք Տէր Աստծուն չէին պաշտում։ Սա փոխարինուել է Նոր Ուխտի մէջ ամբողջ մարդկութեան կողմից, Սուրբ Երրորդութեան մէկ ընտանիքը, որի միակ թշնամին Սատանան է։ Առաջին պարագային, մենք ունենք մի ապգ, ընդդէմ մի ամբողջ ապգերի բազմութեան։ Յաջորդում, մենք ունենք ամբողջ աշխարհը ընդդէմ մի թշնամու՝ սատանայի, մարմնի աչքերի համար անտեսանելի։ Եթէ Ա-ն եւ Բ-ն թշնամիներ են, ապա, նրանք պէտք է անդրադառնան, որ ըստ Նոր Ուխտի՝ նրանց թշնամութիւնը հետեւանք է այն իրողութեան, որ միասին հասարակաց թշնամի ունեն, այսինքն՝ Սատանան։ Նախ եւ առաջ, նրանք թշնամիներ չէին լինի առանց Սատանայի աշխատանքի եւ եթէ նրանք թշնամիներ են, ապա պէտք է հաշտուեն։ Սատանան, որ մի յեգեոն է, երկու կոտորանի, դուրս ցցուած ականջներով եւ կպակով, նետի սուր ծայրով ուժեղ պոչ ունեցող մի արարած չէ։ Ոչ էլ աշխարհի շուրջ սաւառնող ոգի։ Սատանան սանձապերծուած գործունեայ ուժականութիւն է։ Նրան սանձապերծելու մի եղանակը յուպիչ հռետորութիւնն է եւ իր պատկերի համաձայն մեր թշնամու